ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1956 Общественные науки

Խ. Բարսեղյան

ԼԵՆԻՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԿԵՆՍԱՀԱՍՏԱՏ ՈՒԺԸ

I

1956 թվականի ապրիլի 22-ին լրանում է Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության մեծ հիմնադիր, աշխատավոր մարդկության ուսուցիչ և առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 86-ամյակը։

Պատմական նոր պայմաններում, ստեղծագործաբար զարգացնելով բանվոր դասակարգի հանճարեղ ուսուցիչներ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ռևոլյուցիոն ուսմունքը, Լենինը մարքսիստական գիտությունը հարստացրեց նոր դրույթներով։ Անմահ Լենինի ուսմունքը՝ լենինիզմը, մարքսիզմի ստեղծագործական զարգացումն է իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիաների դարաշրջանում։

Վ. Ի. Լենինը ստեղծեց բոլշևիկյան պարտիան, այն զինեց ռևոլյուցիոն ծրագրով և պայքարի հստակ մեթոդներով։ Լենինի կողմից ստեղծված ու կոփված բոլշևիկյան պարտիան մեր ժողովրդին հասցրեց 1917 թվականի Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակին, կազմակերպեց պրոլետարիատի դիկտատուրան, ապահովեց սոցիալիստական հասարակարգի կառուցումը և սովետական ժողովրդին վստահորեն առաջնորդում է դեպի կոմունիզմ։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 20-րդ համագումարը, որը նշանավոր իրադարձություն է մեր երկրի և ամբողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկության կյանքում, փայլուն կերպով ցուցադրեց լենինիզմի կենսահաստատ և անպարտելի ուժը։ Համագումարի ամբողջ ընթացքը, նրա ընդունած որոշումները, այն ջերմ ողջույնները, որոնցով համագումարին դիմեցին երկրագնդի բոլոր կողմերից ժամանած եղբայրական կոմունիստական ու բանվորական պարտիաների դելեգացիաները, կրկին ու կրկին հաստատեցին լենինյան խորաթափանց խոսքերն այն մասին, որ Կոմունիստական պարտիան մեր դարաշրջանի միտքն է, պատիվն ու խիղճը։

Վ. Ի. Լենինի ստեղծած և մարտերում կոփված Սովետական Միության Կոմունիստական պարտիան դարձել է սովետական հասարակության ղեկավար և ուղղություն տվող մեծ ուժը, սովետական ժողովրդի ավանգարդը։

Կոմունիստական պարտիայի ամբողջ պատմությունը, որն անխզելիորեն կապված է իր մեծ կազմակերպչի և առաջնորդի՝ Վ. Ի. Լենինի անվան հետ, նշանավորում է մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքի հաղթանակը։ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ամենահարուստ պատմական փորձը ոգեշնչող օրինակ է պրոլետարական բոլոր պարտիաների—եղբայրական կոմունիստական, բանվորական պարտիաների հա-

մար, որոնք գլխավորում են իրենց երկրների աշխատավորների պայքարը հանուն հասարակության սոցիալիստական վերափոխման։

Վ. Ի. Լենինի անունը դարձել է երկրագնդի բոլոր մասերում ապրող, բոլոր լեզուներով խոսող և իրենց ազատության ու անկախության համար մարտնչող աշխատավոր մասսաների պայքարի և հաղթանակի մարտական դրոշը։

Լենինի ուսմունքը՝ լենինիզմը հզոր լուսարձակի պես լուսավորում է աշխատավոր մարդկության ուղին։

II

Վ. Ի. Լենինը քաղաքական պայքարի ասպարեզ մտավ XIX դարի վերջին, XX դարի սկզբին, երբ Ռուսաստանում հասունանում էր մեծագույն ժողովրդական սոցիալիստական։ Այդ սոցիալիստի գլուխը կանգնած էր աճող և ամրապնդվող, աշխարհի ամենասոցիալիստական ռուսաստանյան պրոլետարիատը, որն ուներ այնպիսի լուրջ դաշնակից, ինչպիսին Ռուսաստանի սոցիալիստական գյուղացիությունն էր։ Դեռևս 1894 թվականին, Վ. Ի. Լենինը իր «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատության մեջ պաշտպանելով մարքսիստական թեորիան և էլ ավելի զարգացնելով այն, առաջին անգամ առաջ քաշեց բանվորների և գյուղացիների դաշինքի գաղափարը, ցույց տալով ռուսական բանվոր դասակարգի պատմական դերը, որպես միջազգային բանվորական շարժման ավանգարդի։

XX դարի սկզբին Վ. Ի. Լենինը հայտարարեց.

«Տվեք մեզ սոցիալիստներների կազմակերպություն — և մենք շուռ կտանք Ռուսաստանը»[1]։

Հենց այդ կազմակերպության ստեղծմանն էլ նվիրեց իր գիտակցական կյանքը Վ. Ի. Լենինը։

Ռուսաստանում սոցիալիստական պրոլետարական պարտիայի սաղմը հանդիսացավ Պետերբուրգի լենինյան «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը» (1895), որի գործունեությունն ուղղված էր մարքսիզմը լայնորեն բանվորական շարժման հետ միացնելուն։

1898 թվականի մարտին Մինսկում գումարված Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի (ՌՍԴԲՊ) առաջին համագումարը հռչակեց Ռուսաստանում մարքսիստական պարտիայի ստեղծումը։ Սակայն ՌՍԴԲՊ առաջին համագումարից հետո Ռուսաստանում մարքսիստական շարժումը առաջվա նման մնում էր սոցիալ-դեմոկրատական առանձին անջատ-անջատ խմբակների ու խմբերի աստիճանում, տիրում էր կազմակերպական մասնատվածություն և տնայնագործություն, նրանք իրար հետ չէին կապված մարտական մարքսիստական ծրագրով և կենտրոնացած կազմակերպական միասնությամբ։

---

[1] Վ. Ի. Լենին, հատ. 5, էջ 622 (Վ. Ի. Լենինի երկերից օգտագործված քաղվածքները բերված են չորրորդ հրատարակությունից)։

Վ. Ի. Լենինը մարքսիստական նոր տիպի պարտիայի կառուցման նախագրյալներից մեկը համարում էր համառուսական քաղաքական լրագրի հիմնումը։

Այդպիսի լրագիր հանդիսացավ 1900 թվականի դեկտեմբերին հիմնադրված լենինյան «Իսկրա» թերթը։ Այն դարձավ ոչ միայն պարտիան իդեապես համախմբելու, այլև տեղական կազմակերպությունները պարտիայի մեջ կազմակերպչորեն միավորելու միջոց։ «Իսկրա»-ն դարձավ պարտիական ուժերի միավորման, պարտիական կադրերի հավաքման ու դաստիարակության կենտրոն, մարքսիստական հստակ ծրագիր ու ռևոլյուցիոն տակտիկա ունեցող համառուսական պրոլետարական պարտիայի կենտրոն։ Պարտիայի երկրորդ համագումարի նախորդած տասնամյակը Ռուսաստանի բանվորական շարժման պատմության մեջ նշանավորվեց Լենինի անհաշտ պայքարով ընդդեմ լիբերալ նարոդնիկության ու «լեգալ մարքսիզմի», տնայնագործության և խմբակայնության, ընդդեմ «էկոնոմիստների» օպորտունիզմի, որոնք հանդես էին գալիս պրոլետարիատի ռևոլյուցիոն պարտիա ստեղծելու դեմ, բանվորական տարերային շարժման մեջ սոցիալիստական գիտակցություն մտցնելու դեմ։

Վ. Ի. Լենինը ստեղծագործաբար զարգացնելով մարքսիզմը, հանճարեղ կերպով մշակեց Կոմունիստական պարտիայի իդեոլոգիական հիմունքները, բարձր պահեց ռևոլյուցիոն թեորիայի նշանակությունը, ցույց տալով, որ «... Առաջավոր մարտիկի դերը կատարել կարող է միայն այն պարտիան, որ ղեկավարվում է առաջավոր թեորիայով»[1]։

Կոմունիստական պարտիայի իդեոլոգիական հիմունքների մշակման գործում նշանավոր ավանդ հանդիսացավ լենինյան «Իսկրան»-ն և Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել» հոչակավոր աշխատությունը։

Վ. Ի. Լենինի եռանդուն գործունեության շնորհիվ ՌՍԴԲՊ երկրորդ համագումարը 1903 թվականին սկիզբ դրեց բանվոր դասակարգի մարտական, ռևոլյուցիոն մարքսիստական պարտիային, նոր տիպի պարտիային, որը սկզբունքորեն տարբերվում է երկրորդ ինտերնացիոնալի ռեֆորմիստական պարտիաներից։

«Բոլշևիզմը,— գրել է Վ. Ի. Լենինը,— որպես քաղաքական մտքի հոսանք և որպես քաղաքական պարտիա, գոյություն ունի 1903 թվականից»[2]։

Վ. Ի. Լենինը մարքսիզմի պատմության մեջ առաջին անգամ մշակեց ուսմունք պարտիայի մասին, որպես պրոլետարիատի ղեկավար կազմակերպության, որպես նրա հիմնական զենքի, առանց որի անհնարին է նվաճել պրոլետարիատի դիկտատուրան, կառուցել սոցիալիզմ և կոմունիզմ։

Վ. Ի. Լենինը իր «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ», «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլյուցիայում», «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատություններում մշակել է Կոմունիստական պարտիայի կազմակերպական, տակտիկական և թեորիական (քաղաքական) հիմունքները։ Վ. Ի. Լենինը իր «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» (1904 թ., մայիս) աշխատության մեջ խորապես հիմնավորեց այն

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, էջ 488։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 9։

դրությամբ, որ Կոմունիստական պարտիան բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն է, նրա քաղաքական առաջնորդը, պրոլետարիատի մարտական շտաբը, որ պարտիան բանվոր դասակարգի կազմակերպված ջոկատն է, պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևը։ Վ. Ի. Լենինը պահանջում էր պահպանել Կոմունիստական պարտիայի միասնությունն ու մաքրությունը, «...Պարտիայի անդամի կոչումն ու նշանակությունը ավելի, ավելի ու ավելի բարձրացնել»[1]։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարը ցույց տվեց, որ մեր պարտիայի Կենտրոնական կոմիտեն անշեղորեն ղեկավարվելով պարտիայի մասին լենինյան ուսմունքով հասել է անանխընթաց հաջողությունների։

Վ. Ի. Լենինը անողոքաբար խարազանում էր այն անհեթեթ պատկերացումը, թե պարտիան առանց ժողովրդի իբր թե կարող է կենսագործել սեփական լոզունգները։ Լենինը Կոմունիստական պարտիայի ուժը ժողովրդի — պատմության այդ իսկական կերտողի հետ ունեցած սերտ կապերի մեջ էր տեսնում։ Որքան ավելի սերտ է պարտիական կազմակերպությունների, պարտիական ղեկավարների ու կոմունիստների կապը աշխատավոր մասսաների հետ, այնքան ավելի բեղմնավոր է միլիոնավոր անպարտիական աշխատավորներին և մասսաներին իրենց հետևից տանող պարտիական կազմակերպությունների աշխատանքը։ Վ. Ի. Լենինի մշակած՝ պարտիական կյանքի հաստատուն նորմաները, ղեկավարման սկզբունքները նախատեսում էին խստիվ պահպանել պարտիայի կանոնադրության պահանջները, հետևողականորեն կիրառել դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքները, ամեն կերպ զարգացնել պարտիայի շարքային անդամների ակտիվությունը, պարտիական կյանքի կարևորագույն հարցերի կոլեկտիվ քննարկումը։

ՍՄԿՊ XX համագումարը՝ քննադատելով Վ. Ի. Լենինի մահից հետո այդ բնագավառում թույլ տրված սխալները, լիովին հավանություն տվեց XIX համագումարից հետո Կենտրոնական Կոմիտեի կատարած մեծ աշխատանքին պարտիական կյանքի լենինյան նորմաները վերականգնելու, ներպարտիական դեմոկրատիան զարգացնելու, մարքսիստական-լենինյան քաղաքականության կիրառման հիման վրա կոլեկտիվ ղեկավարության սկզբունքներն արմատավորելու, պարտիական աշխատանքի ոճն ու մեթոդները կատարելագործելու ուղղությամբ։

Կոմունիստական պարտիան կենդանի, ինքնագործ, անընդհատ զարգացող օրգանիզմ է։

Պարտիան ամրանում է նրանով, որ իրեն մաքրում է օպորտունիստական տարրերից, պարտիական կարգապահությունը խախտողներից։

Կոմունիստական պարտիան սովորեցնում է, որ միայն մարքսիստական-լենինյան թեորիայի գիտական հիմքի և ղեկավար կադրերի լայն նախանձախնդրության վրա հենվող Կենտրոնական Կոմիտեի կոլեկտիվ փորձը, կոլեկտիվ իմաստությունն է ապահովում պարտիայի և երկրի ղեկավարման ճշտությունը, պարտիայի շարքերի անսասան միասնությունը և համախմբվածությունը, կոմունիզմի հաջող կառուցումը մեր երկրում։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 642։

Առաջնակարգ նշանակություն ունի կոլեկտիվ ղեկավարության լենինյան սկզբունքների վերականգնումն ու ամրապնդումը։ Մարքսիզմ-լենինիզմի ոգուն խորթ է անհատի պաշտամունքը, որն այս կամ այն գործիչին դարձնում է հրաշագործ հերոս և միաժամանակ նվազեցնում պարտիայի և ժողովրդական մասսաների դերը, հանդեցնում նրանց ստեղծագործական ակտիվության թուլացմանը։ Պատմության, մեր նոր կյանքի իսկական կերտողը, մարքսիստական-լենինյան թեորիայով զինված պարտիայի կողմից ղեկավարվող ժողովուրդն է։

III

Վ. Ի. Լենինը պատերազմի, խաղաղության և ռևոլյուցիայի հարցերում Կոմունիստական պարտիային զինել է մարքսիստական հստակ ծրագրով։ Լենինիզմը գտնում է, որ իմպերիալիզմի բուն էության մեջ է գտնվում պետությունների կոնֆլիկտների և պատերազմների աղբյուրը։ Դանի դեռ կենդանի է իմպերիալիզմը, գոյություն կունենան պատերազմների վտանգները։ Վ. Ի. Լենինը «Իմպերիալիզմը, որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» և այլ աշխատություններում ստեղծագործարար զարգացնելով և առաջ մղելով մարքսիզմը, պատմական նոր պայմաններին համապատասխան այն հարստացրեց նոր դրույթներով։ Պարտիայի XX համագումարը նոր նշանավոր ավանդ մտցնելով մարքսիստական-լենինյան թեորիայի մեջ, ցույց տվեց, որ նոր պայմաններում էլ ուժի մեջ է մնում լենինյան այն դրույթը, որ քանի գոյություն ունի իմպերիալիզմը, պահպանվում է նաև պատերազմների ծագման տնտեսական հիմքը։ Սակայն պատերազմների ճակատագրական անխուսափելիություն չկա։ Դա ամենից առաջ պայմանավորված է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջացած և ամրապնդված պատմական հայտնի պայմաններով։ Մեր դարաշրջանի գլխավոր գիծը մեկ երկրի շրջանակներից սոցիալիզմի դուրս գալն է և նրա վերածումը համաշխարհային սիստեմի։ Կապիտալիզմն անզոր եղավ խանգարել համաշխարհային-պատմական այդ պրոցեսին։ Պարտիայի XX համագումարը ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցման առթիվ ընդունած բանաձևի մեջ նշել է. «Այժմ կան հասարակական ու քաղաքական հզոր ուժեր, որոնք լուրջ միջոցներ ունեն, որպեսզի թույլ չտան իմպերիալիստների կողմից պատերազմի սանձազերծում, իսկ եթե վերջիններս փորձեն պատերազմ սկսել,— խորտակիչ հակահարված տան ագրեսորներին, վիժեցնեն նրանց ավանտյուրիստական պլանները։ Դրա համար հարկավոր է, որ պատերազմի դեմ հանդես եկող բոլոր ուժերը լինեն զգոն և մոբիլիզացված, որ նրանք գործեն միասնական ճակատով և չթուլացնեն իրենց պայքարը խաղաղության պահպանման ու ամրապնդման համար»[1]։

Դեռևս Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախօրյակին, Վ. Ի. Լենինը իր «Ռուսական ռևոլյուցիան և քաղաքացիական պատերազմը» հոդվածում գրել է. «... հաղթանակ տարած պրոլետարիատը Ռուսաստանին կտա խաղաղություն։ Եվ ոչ մի ուժ չի տապալի խաղաղու-

[1] «Սովետական Հայաստան», № 48 (10661), 25 փետրվարի, 1956։

թյան կառավարությունը, ազնիվ, անկեղծ, արդար խաղաղության կառավարությունը»[1]։

Սովետական իշխանության առաջին դեկրետը խաղաղության դեկրետն էր։ Վ. Ի. Լենինը հայտարարել է, որ «Մեզ համար ամեն բանից թանկ է խաղաղության պահպանումը...»[2], որ «Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիներն ամենից ավելի են գնահատում խաղաղության բարիքները»[3]։

Մարքսիստական—լենինյան թեորիան պնդում է, որ ռևոլյուցիաները տեղի են ունենում ոչ թե պատվերով, առանձին անհատների ցանկությամբ այլ պատմական պրոցեսի օրինաչափ ընթացքով։ «Իհարկե կան մարդիկ,—ասել է Վ. Ի. Լենինը,— որոնք կարծում են, թե ռևոլյուցիան օտար երկրում կարող է ծնվել ըստ պատվերի, ըստ համաձայնության։ Այս մարդիկ կամ խելագարներ են, կամ պրովակատորներ... Մենք գիտենք, որ այդ ռևոլյուցիաները ոչ պատվերով կարելի է անել, ոչ էլ համաձայնությամբ, որ նրանք աճում են այն ժամանակ, երբ տասնյակ-միլիոնավոր մարդիկ գալիս են այն եզրակացության, որ այսպես ապրել այլևս անկարելի է»[4]։

Արտադրության կապիտալիստական եղանակից սոցիալիստականին անցնելը ռևոլյուցիոն մի պրոցես է, որը կատարվում է բանվոր դասակարգի ղեկավար դերի պայմաններում։ Ռևոլյուցիոն վերափոխումները զանազան ձևերով են կատարվում։ Մարքսիզմի գանձարանում խոշոր ներդրում էր Վ. Ի. Լենինի Ապրիլյան հռչակավոր թեզիսները, «Պետություն և ռևոլյուցիա» աշխատությունը, որտեղ նա է՛լ ավելի զարգացրեց մարքսիզմի ուսմունքը պետության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին։

Մեր Հայրենիքը աշխարհում առաջին երկիրն է, որը կապերը խզեց կապիտալիզմից և կանգնեց սոցիալիզմի ուղու վրա։ Ռուսաստանի պրոլետարիատը դաշինք կնքած գյուղացիության հետ, ղեկավարվելով լենինյան ուսմունքով, բոլշևիկյան պարտիայի առաջնորդությամբ, ընթացավ ռուսական երեք ռևոլյուցիաների բովով՝ 1917 թվականի հոկտեմբերին մեր երկրում տապալեց բուրժուազիայի իշխանությունը և հաստատեց ժողովրդական իշխանություն՝ Սովետական իշխանություն։

Վ. Ի. Լենինը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ոգեշնչողն ու կազմակերպիչն է։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը պրոլետարական ռևոլյուցիայի լենինյան թեորիայի հաղթանակն էր, լենինիզմի վառ տրիումֆը։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան նոր դարաշրջան բացեց համաշխարհային մարդկության պատմության մեջ — կապիտալիզմի կործանման և կոմունիզմի հաղթանակի դարաշրջանը։ Ռևոլյուցիայի հաղթանակով Վ. Ի. Լենինի ստեղծած Կոմունիստական պարտիան ազգային ուժից դարձավ միջազգային, ինտերնացիոնալ ուժ։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան արմատապես փոխեց իրադրությունը Ռուսաստանում։ Ռևոլյուցիայի հաղթանակից հետո, Վ. Ի. Լենինը հանդես է գալիս որպես կառավարող պարտիայի առաջնորդ,

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 30։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 131։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 166։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 601։

աշխարհում առաջին սոցիալիստական բազմազգ պետության հիմնադիր և ղեկավար։

Վ. Ի. Լենինի գլխավորությամբ Կոմունիստական պարտիան քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի ժամանակաշրջանում սովետական երիտասարդ ռեսպուբլիկան հասցրեց լիակատար հաղթանակի։

Վ. Ի. Լենինը հռչակեց ազգերի իրավահավասարության սկզբունքը, իրականացրեց սովետական ռեսպուբլիկաների միավորման և ՍՍՌՄ ստեղծման մեծ գործը, համառ և լարված աշխատանք կատարեց մեր երկրի մյուս ժողովուրդներին ռուս մեծ ժողովրդի շուրջը համախմբելու համար։

Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության ստեղծումը Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության խոշոր հաղթանակն էր։ Կոմունիստական պարտիան իր քաղաքականության մեջ ելել և ելնում է մեծ Լենինի այն դուրսումից, որ «տարբեր ազգերի շահերի նկատմամբ հսկայական ուշադրությունն է միայն, որ վերացնում է կոնֆլիկտների հողը, վերացնում է փոխադարձ անվստահությունը»[1]։

Սոցիալիստական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի զարգացումն՝ ահա սոցիալիստական ազգերի եղբայրական փոխադարձ կապի ամրապնդման գաղափարական հիմքը։

Վ. Ի. Լենինը Կոմունիստական պարտիային գինել է մեր երկրում կոմունիզմի կառուցման հստակ, գիտականորեն հիմնավորված ծրագրով։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից առաջ և սոցիալիստական շինարարության առաջին տարիներին, Վ. Ի. Լենինը Կոմունիստական պարտիային ղեկավար ցուցումներ էր տալիս, որ սոցիալիստական վերափոխումները սկսելուց և սոցիալիզմն իրականացնելուց հետո հաջորդ քայլը կլինի կոմունիզմը։ Երբ կաճեն հասարակության արտադրողական ուժերը և կզարգանան նրանց համապատասխանող արտադրական հարաբերությունները, երբ բոլորը կսովորեն ինքնուրույնաբար կենսագործել ընդհանուր հաշվառումն ու վերահսկողությունը, երբ հասարակությունը կուլտուրապես կաճի «... այն ժամանակ լայնորեն կբացվի դուռը կոմունիստական հասարակության առաջին փուլից նրա բարձրագույն փուլին անցնելու համար»[2]։

Վ. Ի. Լենինը «Սովետական իշխանության հերթական խնդիրները» աշխատության մեջ գնահատելով սոցիալիստական ռևոլյուցիայի առաջին շրջանի արդյունքները, ընդգծել է, որ ստեղծելով Սովետական պետությունը մենք լուծեցինք դժվարին խնդրի միայն առաջին մասը, իսկ գլխավոր դժվարությունը գտնվում է տնտեսական բնագավառում։ Այսպիսով, Վ. Ի. Լենինը պարտիական աշխատանքը շարունակ կապում էր տնտեսական գործունեության հետ։ Վ. Ի. Լենինը պահանջում էր՝ անընդհատ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ամենախիստ և համատարած հաշվառում ու վերահսկողություն հաստատել մթերքների արտադրության և բաշխման նկատմամբ։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 457։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 619։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ կոմունիստական հասարակություն չի կարելի կառուցել, եթե չվերածնվեն արդյունաբերությունն ու հողագործությունը, այն էլ գիտության վերջին խոսքով կառուցված հիմքի վրա։ Իսկ այդ հիմքը Վ. Ի. Լենինը համարում էր էլեկտրականությունը։ Միայն այն ժամանակ, երբ ամբողջ երկիրը, արդյունաբերության և հողագործության բոլոր ճյուղերը կենթարկվեն էլեկտրիֆիկացման, կարող է կառուցվել կոմունիստական հասարակությունը։ «Կոմունիզմը— դա Սովետական իշխանությունն է պլյուս ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան»[1]։

Վ. Ի. Լենինը մարգարեաբար կանխատեսում էր, որ եթե Ռուսաստանը ծածկվի էլեկտրակայանների և տեխնիկական հզոր սարքավորումների խիտ ցանցով, այն ժամանակ մեր կոմունիստական տնտեսական շինարարությունը օրինակ կդառնա գալիք սոցիալիստական Եվրոպայի և Ասիայի համար։

Ծանր ինդուստրիան սոցիալիզմի տնտեսության հիմքերի հիմքն է։ Վ. Ի. Լենինը նշել է, որ սոցիալիզմի միակ նյութական հիմքը կարող է լինել խոշոր մեքենայական արդյունաբերությունը, որն ընդունակ է վերակառուցելու նաև հողագործությունը։

Կոմունիստական պարտիան անշեղորեն ղեկավարվելով մեծ Լենինի հանճարեղ ցուցումներով մեր երկրում հաջողությամբ իրականացրեց ինդուստրացման լենինյան քաղաքականությունը։ ՍՍՌՄ-ի խոշոր արդյունաբերության արտադրանքն 1940 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, աճեց մոտ 12 անգամ, իսկ նույն ժամանակամիջոցում մեքենաշինության արտադրանքը աճեց 45 անգամ։

Մեր երկրի ծանր ինդուստրիայի և ամբողջ ժողովրդական տնտեսության հետագա վերելքը տեղի կունենա տեխնիկական պրոգրեսի, արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների լայն արմատավորման հիմքի վրա։ Դա հնարավորություն կտա էլ ավելի բարձրացնել աշխատանքային արտադրողականությունը և երկրում ստեղծել մթերքների առատություն։

Վ. Ի. Լենինը գիտականորեն հիմնավորել է, որ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճիշտ և հնարավոր ուղին գյուղացիության կոոպերացման ուղին է, ծանր ինդուստրիայի բազայի վրա գյուղատնտեսության կոլեկտիվացման ուղին։

Լենինի կոոպերատիվ պլանի պրակտիկ իրականացումը հասցրեց սոցիալիզմի հաղթանակին մեր երկրում։

Կոմունիստական պարտիան, իրականացնելով Մեծ Լենինի պատգամները, հատուկ ուշադրություն է նվիրում սովետական մարդկանց դաստիարակության, նրանց նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման հարցերին։ Պարտիայի XX համագումարը հանրագումարի բերելով ժողովրդի կենսամակարդակի բարձրացման գործում ձեռք բերած նվաճումները, ցույց տվեց, որ միայն հինգերորդ հնգամյակում ՍՍՌՄ ազգային եկամուտը,— իսկ հայտնի է, որ այդ եկամուտի երեք քառորդը մեղանում գնում է բնակչության անձնական պահանջմունքների բավարարման համար,— ավելացել է 68 տոկոսով։ Այդ ժամանակամիջոցում բանվորների

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 654։

և ծառայողների ռեալ աշխատավարձը աճել է 39 տոկոսով, իսկ կոլտնտեսականների ռեալ եկամուտը՝ 50 տոկոսով։ Հնգամյակի ընթացքում պետությունը 689 միլիարդ ռուբլի է ծախսել սոցիալական ապահովագրության գծով։

Մեր երկրում կատարված կուլտուրական ռևոլյուցիան լենինիզմի դաղափարների փայլուն հաղթանակներից մեկն է։ Ծաղկում և բարդավաճում են սովետական կուլտուրան, գիտությունը, դրականությունը։ Մեր երկրի ուսումնական բոլոր հաստատություններում այժմ սովորում են ավելի քան 57 միլիոն մարդ, կամ համարյա 8 միլիոնով ավելի, քան 1940 թվականին։ Հինգերորդ հնգամյակում մեր երկրի ՌՈՒՀ-երը տվել են ավելի քան մեկ միլիոն 120 հազար մասնագետներ, այսինքն 72 տոկոսով ավելի, քան չորրորդ հնգամյակում։ 1917—1955 թվականներին մեր երկրում հրատարակվել է 18 միլիարդ 191 միլիոն օրինակ գիրք՝ 122 լեզվով։ 1955 թվականին ՍՍՌՄ-ում հրատարակվել է 7231 թերթ, որի միանվագ տիրաժը կազմել է մոտ 48,5 միլիոն օրինակ։

Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ Սովետական Միության եղբայրական իրավահավասար ռեսպուբլիկաների մեծ ընտանիքում խոշոր հաջողություններ է ձեռք բերել Սովետական Հայաստանը։ Մեծ Լենինի հանճարով վերածնված ազատ ու երջանիկ Հայաստանը Սովետական իշխանության տարիներին դարձել է զարգացած արդյունաբերության, սոցիալիստական գյուղատնտեսության և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի առաջավոր ռեսպուբլիկա։

Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատ և իրավահավասար ժողովուրդների միասնական ընտանիքում դարձնում է իր նոր, երջանիկ կյանքը, իր էլ ավելի պայծառ ապագան։ Կյանքը ցույց տվեց մեծ Լենինի մարգարեական խոսքերի կենսունակությունն այն մասին, որ սոցիալիզմը ոչ միայն չի ոչնչացնում ազգային տարբերություններն ու առանձնահատկությունները, այլ ընդհակառակը, ապահովում է բոլոր ազգերի ու ժողովուրդների էկոնոմիկայի և կուլտուրայի բազմակողմանի զարգացումն ու ծաղկումը։ Սովետական Հայաստանի արդյունաբերությունը օրական ավելի քան չորս անգամ շատ արդյունաբերական արտադրանք է թողարկում, քան արտադրվել է ամբողջ 1919 թ., երբ Հայաստանում տեր ու տնօրինություն էին անում ամերիկյան դաղութարարներն ու նրանց գործակալ դաշնակները։ 1940 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, Հայաստանում արդյունաբերությունն աճել է ավելի քան 22 անգամ։ 1955 թվականին Հայկական ՍՍՌ-ի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը 1950 թվականի արդյունաբերության ծավալը գերազանցեց դրեթե երկու անգամ։

Սովետական Հայաստանի աշխատավորները կենսագործելով մեծ Լենինի պատգամները, խոշոր հաջողություններ են ձեռք բերել էլեկտրիֆիկացման բնագավառում։ Ռեսպուբլիկայի էլեկտրակայանները, այժմ մեկ օրում արտադրում են ավելի շատ էլեկտրաէներգիա, քան Հայաստանում արտադրվել է ամբողջ 1914 թվականի ընթացքում։ Դրա շնորհիվ Հայաստանում մեկ շնչին ավելի շատ էլեկտրաէներգիա է ընկնում, քան Ֆրանսիայում և Իտալիայում։ Նոր հնգամյակի դիրեկտիվներում նախատեսված է ռեսպուբլիկայում արդյունաբերության համախառն արտադրանքը ավելաց-

նել մոտ 70 տոկոսով, ընդ որում գունավոր մետաղների և էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի արդյունաբերությունը՝ ավելի քան 3 անգամ, քիմիական արդյունաբերությունը՝ 2,2 անգամ, մեքենաշինությունն ու գործիքաշինությունը՝ 2,7 անգամ, շինանյութերինը՝ 1,7 անգամ, սպառման առարկաների արտադրությունը՝ 1,4 անգամ։

Կոլտնտեսային կարգի ամրապնդման հիման վրա հսկայական զարգացման է հասել ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը։ Կատարելով մեծ Լենինի ցուցումները՝ Կովկասի կոմունիստներին՝ Հայաստանի Կոմպարտիան իր ուշադրության կենտրոնում է պահում իրիգացիայի հարցերը, օրավուր ընդարձակում ոռոգվող ցանքատարածությունները։ Սովետական իշխանության տարիներին մեծ ծաղկման է հասել Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի կուլտուրան։ Այժմ ռեսպուբլիկայի գյուղական յուրաքանչյուր չորս բնակավայրին ընկնում է մեկ միջնակարգ դպրոց։ Միայն Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան իր կազմում ունի 30 գիտահետազոտական ինստիտուտ և լաբորատորիա։

Հայաստանի գիտնականներն արժեքավոր ավանդներ են մտցնում սովետական գիտության մեջ։

IV

Սովետական ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ ՍՍՌՄ-ում հաջողությամբ կառուցելով սոցիալիզմը, աստիճանաբար ընթանում է դեպի կոմունիզմ։ Պարտիայի XX համագումարը հանրագումարի բերելով կոմունիզմի կառուցման ճանապարհին ձեռք բերած նվաճումները, աշխատանքի ու պայքարի ծրագիր տվեց մեր պարտիային և սովետական ժողովրդին։ Համագումարը, ելնելով մարքսիստական-լենինյան թեորիայի ստեղծագործական բնույթից, ցույց տվեց, որ համաշխարհային ասպարեզում կատարված արմատական փոփոխությունները նոր հեռանկարներ են բացում նաև դեպի սոցիալիզմ տարբեր երկրների և տարբեր ազգերի անցման գործում։ Դեռևս մեծ Հոկտեմբերի նախօրյակին Վ. Ի. Լենինը գրել է. «Բոլոր ազգերը կգան դեպի սոցիալիզմ՝ դա անխուսափելի է, բայց բոլորը կգան ոչ բոլորովին միատեսակ, յուրաքանչյուրը յուրահատկություն կմտցնի դեմոկրատիայի այս կամ այն ձևի մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի այս կամ այն տարատեսակության մեջ, հասարակական կյանքի զանազան կողմերի սոցիալիստական վերափոխումների այս կամ այն տեմպի մեջ։

Չկա ոչինչ ավելի աղքատ բան թեորեապես և ավելի ծիծաղելի բան՝ գործնականապես, քան «հանուն պատմական մատերիալիզմի» ապագան նկարել այդ տեսակետից մեկ գորշ գույնով. դա կլիներ սուզդալյան խզմզվածք, դրանից ոչ ավելի»[1]։

Պատմական փորձը լիովին հաստատեց Վ. Ի. Լենինի այդ հանճարեղ դրույթը։ Այժմ սոցիալիստական հիմունքներով հասարակության վերակառուցման սովետական ձևից բացի, կա ժողովրդական դեմոկրատական ձև,

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 81։

որն իր հերթին տարբեր երկրներում ունի իր երանգները։ Պարզ է, որ սոցիալիզմին անցնելու ձևերն ավելի ու ավելի բազմազան կլսոնան։

Լենինիզմը սովորեցնում է, որ տիրապետող դասակարգերը իշխանությունը կամովին չեն զիջում։ Սակայն սոցիալիզմին անցնելու համար դասակարգային պայքարի սրության առավել կամ նվազ աստիճանը, այդ անցման ժամանակ բռնություն գործադրելը կամ չգործադրելը կախված են ոչ այնքան պրոլետարիատից, որքան աշխատավորների գերակշռող մեծամասնության կամքին շահագործողների դիմադրության աստիճանից, հենց իրենց՝ շահագործողների դասակարգի կողմից բռնություն գործադրելուց[1]։

Վ. Ի. Լենինը 1917 թվականի ապրիլին, այն ժամանակ ստեղծված պայմաններում, թույլ էր տալիս ռուսական ռևոլյուցիայի խաղաղ զարգացման հնարավորությունը։ Դրանից շատ չանցած, 1918 թվականի գարնանը, Վ. Ի. Լենինը մշակեց խաղաղ սոցիալիստական շինարարության պլանը, որը խախտվեց ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի պատճառով։ Օտարերկրյա իմպերիալիստները և սպիտակ գվարդիականները անհամար մեսաներ պատճառեցին մեր երկրին։

Լենինիզմը չի բացառում սոցիալիզմին անցնելու համար նաև պառլամենտական ուղին օգտագործելու հնարավորությունը։ Պատմությունն ամենայն լիակատարությամբ հաստատում է մեծ Լենինի կանխատեսումը որ «ռևոլյուցիայի զարգացումը զանազան երկրներում ընթանում է զանազան ձևերով, զանազան տեմպով (և այլ կերպ չի էլ կարող ընթանալ)»[2]։

Ժամանակակից, համաշխարհային նոր իրադարձության մեջ, մի շարք երկրների համար լիովին հնարավոր են նաև այնպիսի պայմաններ, երբ բանվոր դասակարգն իր կոմունիստական ավանգարդի գլխավորությամբ, իր շուրջը համախմբելով աշխատավորներին, բոլոր պրոգրեսիվ ուժերին, պայքարի պրոցեսում կարող է պառլամենտը դարձնել ազգի գերակշռող մեծամասնության շահերի օգտին գործող իսկական դեմոկրատիայի օրգան։ Լենինիզմը պահանջում է կոնկրետ կերպով հաշվի առնել տվյալ իրադրությունը։ Վ. Ի. Լենինը, որպես «ալգեբրան ծիծաղելի» տեսակետ, մերժում էր այն տեսակետը, որի համաձայն կապիտալիզմի փոխարինումը սոցիալիզմով իբրև տեղի կունենա այն ճանապարհով, որ «մի տեղում կշարվի մի զորքը և կասի «մենք սոցիալիզմի կողմն ենք», իսկ մյուսում մյուս զորքը և կասի «մենք իմպերիալիզմի կողմն ենք» և դա սոցիալական ռևոլյուցիա կլինի»[3]։

Պարտիայի XX համագումարը նշեց, որ որոշ երկրներում սոցիալիզմի հաղթանակի համար ավելի նպաստավոր պայմանները հնարավոր են դարձել միայն այն պատճառով, որ սոցիալիզմը հաղթանակել է Սովետական Միությունում և հաղթանակում է ժողովրդական դեմոկրատիայի երկրներում, որ սոցիալիզմը դարձել է համաշխարհային սիստեմ։ Այդ հաղթանակի անհրաժեշտ պայմանը ռևոլյուցիոն մարքսիզմ-լենինիզմի հաղ-

---

[1] Տես Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարի բանաձևը ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցման վերաբերյալ։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 75։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 479։

թանակն էր, հետևողականորեն և վճռաբար մղված պայքարը ռեֆորմիզմի, օպորտունիզմի իդեոլոգիայի դեմ։

Սոցիալիզմին անցնելու բոլոր ձևերի դեպքում անհրաժեշտ և վճռական պայմանը բանվոր դասակարգի քաղաքական ղեկավարությունն է՝ նրա առաջավոր մասի գլխավորությամբ։ Առանց դրա անհնարին է անցումը սոցիալիզմին։

V

Կոմունիստական պարտիայի XX համագումարը կրկին ցուցադրեց մեր պարտիայի և ժողովրդի սերտ միությունը, միաձուլությունը։ Համագումարը հաստատեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1956—1960 թվականների պլանը։ «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանի գլխավոր խնդիրներն են՝ ծանր արդյունաբերության առավել զարգացման, տեխնիկական անընդհատ պրոգրեսի և աշխատանքի արտադրողականության բարձրացման բազայի վրա ապահովել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետագա հզոր աճը, իրականացնել գյուղատնտեսության արտադրության շեշտակի վերելքը և այդ հիման վրա հասնել սովետական, ժողովրդի նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի նշանակալից բարձրացմանը։

Մեր պարտիան հաղթանակել և հաղթանակում է՝ հավատարիմ լենինիզմին։ Նա մեր կադրերին, բոլոր կոմունիստներին ուսուցանում է հաստատակամորեն տիրապետել ռևոլյուցիոն թեորիային՝ մարքսիզմ-լենինիզմին։

Կոմունիստական պարտիայի հերոսական պատմությունը մարքսիզմ-լենինիզմն է գործողության մեջ։

Մարդկային ամբողջ պատմության մեջ չի եղել և չկա ուրիշ այլ վեհ իդեալ, քան կոմունիզմի կառուցումը։ Կոմունիզմի գաղափարները ձգողական հսկայական ուժ ունեն և նվաճում են նորանոր կողմնակիցներ։ Ոչ ոք չի կարող կասեցնել այդ պրոցեսը։ Միաժամանակ, ինչպես պարտիայի XX համագումարը նշեց, Սովետական կառավարությունը ճիշտ է վարվում, երբ անշեղորեն վարում է խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքը, բոլոր երկրների հետ հարաբերությունները բարելավելու, վստահությունն ամրապնդելու և համագործակցությունը զարգացնելու կուրս։ Հասել է համաշխարհային պատմության՝ Վ. Ի. Լենինի կանխագուշակած նոր ժամանակաշրջանը, երբ Արևելքի ժողովուրդներն ակտիվ մասնակցություն են ունենում ամբողջ աշխարհի բախտի վճռմանը, միջազգային հարաբերությունների նոր հզոր գործոն են դառնում։

Օրակարգում այժմ կանգնած է գաղութային սիստեմի լիակատար լիկվիդացման հարցը։

Լենինիզմը սովետական ժողովրդի, ժողովրդական դեմոկրատիայի երկրների աշխատավորների և ամբողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկության պայքարի դրոշն է։